ՎԱՐԴՈՒՀԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԷԿԶԻՍՏԵՆՑԻԱԼԻԶՄԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՀԵ ՔԱՉԱՅԻ «ԱԿՆ ԸՆԴ ԱԿԱՆ» ՎԵՊՈՒՄ

Հայկական ծագումով ֆրանսալեզու գրողների շարքում իր հաստատուն տեղն է զբաղեցնում Վահե Քաչան՝ Վահե Խաչատուրյանը, (1928-2003): Գրական աշխարհում նա հանրաճանաչ է իր ստեղծագործություններով՝ «Ակն ընդ ական», «Կարթը», «Գիշատիչների խնջույքը»:

Վ.Քաչայի գործունեությունն ավելի լայն է, զբաղվել է նաև կինոարվեստով և լրագրությամբ: Նրա ֆիլմերում նկարահանվել են մի շարք հայտնի դերասաններ՝ Միրեյ Դարկը, Ժան-Պոլ Բելմոնդոն, Բրիջիտ Բարդոն և այլոք:

Նրա սցենարների և վեպերի հիման վրա նկարահանվել են բազմաթիվ ֆիլմեր՝ «Կարթը» (1963)՝ Քըրք Դուգլասի մասնակցությամբ, «Արևորչի ութերորդ օրը», «Գալիա» (1966), «Ուրախության ձայնը» (1967) և «Լոդի ուսուցիչը» (1979)՝Ժան-Լուի Տրինտինյանի և Ժան-Կլոդ Բրայլի մասնակցությամբ:

Հայազգի տաղանդավոր ռեժիսոր Անրի Վերնոյը Վահե Քաչայի սցենարների հիման վրա նկարահանել է «Դրամարկղը» (1971) ֆիլմը՝ Ժան-Պոլ Բելմոնդոյի և «Մայրիկ»-ը՝ Օմար Շարիֆի և Կլաուդիա Կարդինալեի մասնակցությամբ:

Վ.Քաչան հանրաճանաչ է նաև լրագրության բնագավառում: Ֆրանսիան գնահատել է նաև հանրաճանաչ գրողի լրագրողական տաղանդը՝ 1962 թ. նրան շնորհվել է պատվավոր «Պելման» մրցանակը՝ «Խղճահարություն չկա կույրերի հանդեպ» և «Քաղցկեղավորները» ռեպորտաժների համար:

Կյանքի ընթացքում կուտակված իր մտորումները հայկական ծագման, Հայաստանի մասին, եղեռնի ժամանակ զոհ դարձած նախնիներին երբեք չմոռանալու փայլուն ապացույցն է «Մի դաշույն այս պարտեզի մեջ» (1981) վեպը:

Գրականության մեջ ընդունված կարծիքով էկզիստենցիալիզմի տրոհումը ազդարարվում է Սիմոն դը Բովուայի «Մանդարինները» վեպով, սակայն ֆրանսիական էկզիստենցիալիզմի նման ազդեցիկ ուղղությունը չէր կարող վերանալ, այլ սկսում է տրոհվել՝ կորցնելով իր գլխավոր առանձնահատկությունները:

50-ական թթ. իրեն կարծես սպառած ֆրանսիական էկզիստենցիալիստական ուղղությունն իր հավատարիմ հետևորդն ունեցավ ի դեմս Վահե Քաչայի, որն իր ստեղծագործական ողջ ուղու ընթացքում հավատարիմ է մնացել գոյության փիլիսոփայական դրույթներին:

Էկզիստենցիալիստների համար բարձրագույն տրանսցենդենտ ռեալությունը մահն է՝ «մահվան-համար-կեցությունը», իսկ միակ ճշմարտությունը՝

անխուսափելի մահվան ճշմարտությունն է: Մահը դիտվում է մարդկային գոյության հմաստ ու նպատակ: Ուստի նրանց ստեղծագործությունները անհմաստ կլինեին, եթե չանդրադառնային այս «անհեթեթ» աշխարհից մարդու անհետացման հարցին և չուսումնասիրեին դրա ազդեցությունը հասարակության մյուս անդամների վրա: «Մահվան հարցը կարևորագույն տեղ է գրավում գրականության և արվեստի մարգերում,- գրում է Ալբերտ Նալչաջյանը և շարունակում,- այն գրականությունը, որը խորությամբ չի վերլուծում մահվան հետ առնչվող բազմաթիվ հոգեբանական հարցերը, մարդկանց վարքագծի ու մտածելակերպի վրա նրանց ունեցած ազդեցությունը, թուլացնում է իր ուժը, իրատեսական բնույթն ու հմայքը»:[1] Դարեր շարունակ մահը՝ այս առեղծվածային և սարսափազդու երևույթը, քննարկվել է փիլիսոփայական և հոգեբանական մի շարք ուղղությունների կողմից, իսկ էկզիստենցիալիստական փիլիսոփայության մեջ մահվան պրոբլեմը կենտրոնական տեղ է գրավում:

Մահվան թեման ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներկա է Վահե Քաչայի գրեթե բոլոր ստեղծագործություններում: Էկզիստենցիալիստ գրողը մեծ ուշադրությամբ է զննում բնության այս առեղծվածը: Նրա վեպերի հերոսները, դեմ առ դեմ հանդիպելով մահվանը, հայտնվում են «սահմանային իրադրություններում»: Նրանք ընկնում են տանջալի, անելանելի, անբնական իրադրության մեջ: «Ակն ընդ ական» վեպը (1955) երիտասարդ արձակագրի երկրորդ վեպն է, «Կիրակի օրվանից մնացած ծխուկներ» վեպից հետո: Այս վեպով հայազգի գրողը միանգամից մեծ ճանաչում ձեռք բերեց, իսկ 1957 թ. արժանացավ Ռիվարոլի անվան պատվավոր գրական մրցանակին: Այս ստեղծագործության մեջ գործողությունները կատարվում են Միջին Արևելքի քաղաքներից մեկում՝ Տրիպոլիում: Բնապատկերների նկարագրումը հեղինակը զուգակցում է բնակիչների առօրյայի, նրանց ապրելակերպի, վարքի ու բարքի հետ և այս բոլորին զուգընթաց կատարում է հոգեբանական խորը վերլուծություններ:

Բժիշկ Էմեն՝ Վ.Քաչայի «Ակն ընդ ական» վեպի հերոսը, պետությունից առատորեն վարձատրվելով, 3 տարի պայմանագրով աշխատում է Տրիպոլի քաղաքում: Հիվանդանոցում նա իրեն զգում է ինչպես իր տանը, իր տերության մեջ: Բայց ահա մի օր նրա հանգիստ ու միապաղաղ կյանքն ընդհատվում է:

Գիշերվա կեսին կանչ է ստանում, բայց նա չի ցանկանում ընդունել հիվանդին: Իսկ հաջորդ առավոտ գալով հիվանդանոց՝ իմանում է, որ արտաարգանդային հղիության պատճառով իրեն դիմած հիվանդը մահացել է:

Մահվան հետ այս հանդիպումը ցնցում է Էմենին: Բախվելով մահվանը բժշկի մեջ նախ և առաջ խոսում է մարդը, քանի որ մահվան առեղծվածը բոլորովին անծանոթ երևույթ էր նրան, ահա, ինչպես և Քաչայի մեկ այլ հերոս, մասնագիտությամբ բժիշկ Քերլյանը («Արարչի ութերորդ օրը») անպատ-

---

1. Ալ. Նալչաջյան «Մահվան հոգեբանություն», Փյունիկ, Երևան 1992թ, էջ 6.

ռաստ է ընդունելու մահվան առկայությունը որպես մարդկային կյանքի երևույթ:

Բժիշկը նրա մեջ խոսում է ավելի ուշ, երբ հիշում, համադրում ու վերլուծում է իրադրությունը: Եթե այդ երեկո նա չխախտեր «բժշկության հայր» Հիպոկրատի երդումը և ժամանակին օգնություն ցույց տար, տիկին Բորտակը կշարունակեր իր կյանքը: Ի տարբերություն «Արարչի ութերորդ օրը» վիպակի, ուր բժիշկ Քերլանը, առաջնորդվելով հումանիստական գաղափարներով, փրկում է Իռեն Դյումանի կյանքը, «Սկզբ ընդ ական»-ի գլխավոր հերոսը օգնության չի հասնում հիվանդին և մտովի իրեն է մեղադրում երիտասարդ կնոջ մահվան մեջ: Էռմեի հոգում կոնֆլիկտ է: Էռմեն գիտակցում է, որ իր արարքը հակասում է թե՛ մասնագիտական, թե՛ մարդկային նորմերին: Մինչ օրս նա գերազանց բժիշկ էր, քանի որ երկու տարվա ընթացքում Տրիպոլիում հարյուրավոր հիվանդների է վիրահատել, ոչ մի մահ: Տիկին Բորտակի մահը կրծում է նրա հոգին, մտատանջում: Հանուն մի երեկոյի հանգստի՝ նա «մարդասպանի» է վերածվում անտարբերության պատճառով: Այդ երեկոյի հանգիստը մի մարդու կյանք արժեցավ: Վ.Քաչան ուսումնասիրում է մարդուն իր հոգու մարդկային, ամենախորունկ, ամենանուրբ կողմերով, իր ապրումների, խոհերի, զգացմունքների շարժմամբ: Իր գեղարվեստական մեթոդին բնորոշ նա վերլուծում է այդ իրավիճակը և հանգում հոգեբանական երկընտրության: Եթե ժամանակին ճիշտ օգնություն ցույց տար՝ կփրկե՞ր արդյոք նրան՝ և այո, և ոչ: Բայց չէ՞ որ յուրաքանչյուր կենդանի էակ ապրում է, եթե որևէ հնարավորություն կա, անգամ ամենաողորմելին, ամենաչնչինը:

Վ.Քաչան իրեն հատուկ հոգեբանական վերլուծությամբ ցույց է տալիս բժշկի ներքին տառապանքը: Հանդիպելով մահվանը՝ նա ապրում է վախ, ապա վախը վերածվում է սարսափի: Սարսափը փիլիսոփայության պատմության մեջ հանգամանալիորեն ուսումնասիրվել է էկզիստենցիալիստ փիլիսոփաների կողմից: Միայն «գոյության էկզիստենցիալ վերլուծության» ժամանակ կարելի է մանրամասնորեն բացատրել վախը, սարսափը: Ըստ Մ.Հայդեգերի «սարսափը սկզբնապես բացահայտում է «աշխարհը որպես աշխարհ».[2]

Էկզիստենցիալիստական գրականությունն, այն կիրառում է գեղարվեստական գործերում և, կոնկրետացնելով հերոսների միջոցով, մանրակրկիտ բացատրում է դրա սկզբնապատճառը, վախի վերացումը սարսափի և դրա հետևանքները: Սարսափ զգալու ժամանակ Վ.Քաչայի տարբեր վեպերի հերոսները (Վիլկեր, Իռեն, դոկտոր Քարտ, Պիեռ, Էռմեն, Թեյլոր...) դիմազրկվում են՝ ներկայանալով այնպիսին, ինչպիսին են: Այս հերոսները, հայտնվելով «սահմանային իրադրությունում», բացահայտում են աշխարհը իր իրական տեսքով՝ «աշխարհը որպես աշխարհ»:

---

2 Хайдеггер М., Разговор на проселочной дороге, М.: Изд-во Высшая школа, 1991, стр 79.

Ըստ գոյության փիլիսոփայության, սարսափի ապրումը հերոսների մոտ առաջ է բերում ազատություն, որը տալիս է ազատ գործելու, ազատ որոշումներ ընդունելու հնարավորություն: Միայն ազատ դառնալով՝ անհատը կարող է լիովին պատասխանատվություն կրել իր արարքների համար: Եվ այստեղ էլ բժիշկ Բոտեն, սարսափ զգալով երիտասարդ կնոջ մահվանից, ծերբազատվում է իրեն կաշկանդող մտքերից՝ կանգնելով «կամ-կամ» երկընտրության առջև, նա կարողանում է ազատ որոշում կայացնել ու մասամբ իրեն մեղադրել տիկին Բորտակի մահվան մեջ:

«Ցանկացած հոգեվիճակ,- գրում է Մ.Հայդեգերը,- բացահայտում է կեցությունն աշխարհում» կազմող բոլոր կողմերը, բայց միայն սարսափի մեջ է պարունակվում առանձնահատուկ ինքնաբացահայտման հնարավորությունը»:[3] Հայդեգերը սարսափի ֆենոմենը դիտում է որպես հոգեվիճակի հիմնական չափանիշ, Վ.Քաչայի համար այն անհատի հոգու ամենանուրբ գաղտնիքները բացահայտելու հնարավորություն է: Այսպիսով նրա մոտ սարսափի փիլիսոփայական հասկացությունը դառնում է «գոյության առանձնահատուկ բացահայտման» միջոց: Վեպի հերոսը գտնվում է բարդ էմոցիոնալ վիճակում: Նման իրադրությունը անհարմարավետության զգացում է, երբ անհատը, ապրելով վախ, սարսափ և լարելով իր բոլոր զգայարանները, իրադրությունից դուրս պրծնելու, տվյալ դեպքում՝ բարոյական արդարացման ելք է փնտրում: Պատահականությունները թվում է դառնում են օրինաչափություններ: Հերոսն անընդհատ մտածում է, որ իրեն հետևում են, նույնիսկ ոտնձգություններ է լսում իր հետևում: Բոտեին թվում է, թե մահացողի ամուսինը՝ Էմիլ Բորտակը, հետևում է նրան: Այն պահից ի վեր, երբ սրճարանում պարոն Բորտակը բժշկի փոխարեն փակում է հաշիվը, Բոտեի բարոյական տանջանքն ավելի է խորանում: Ասես Բորտակը կրկնակի հոգեկան լարվածության մեջ է գցում բժշկին և ցույց տալիս, որ զայրույթ չի զգում բժշկի հանդեպ: Կամ, միգուցե, սա վրեժի մի այլ տեսակ է: Բոտեն պարտքը վերադարձնելու ելք է փնտրում: Բորտակը երևում է նրան ամենուր, օրը ցերեկով փողոցի եռուզեռի մեջ, բայց չի ցանկանում երես առ երես հանդիպել, զրուցել, պարզաբանել, իմանալ մահվան պատճառը, փոխարենը նա բժշկին պահում է տագնապի մեջ: Տագնապը հաջորդում է մեղքին թե կրոնական, թե կենսական մակարդակով: Սա ևս էկզիստենցիալիստական փիլիսոփայության կարևորագույն հասկացություններից է Ըստ Ս.Կիերկեգորի այն ունի ուսուցողական արժեք, քանի որ այն մերկացնում է բոլոր պատրանքները: «Տագնապի հետ կապված՝ սարսափը, կորուստը և կործանումը սերտաճած են մարդու հետ»:[4]

---

3. Хайдеггер М., Разговор на проселочной дороге, М.: Изд-во Высшая школа, 1991, стр 78.

4. Kierkegaard ,,Aux sources de l'existentialisme chretien,, , Paris 1958. p 206.

Որքան բավարար են չանհանգստանալու օրինական հիմքերը, այնքան բժիշկ էոմեն բարոյապես շատ է տագնապում և ձգտում դեմ առ դեմ հանդիպել Բորտակին: Բնական է, բժիշկը ապրում է ջղածիգ սպասման մեջ, և ժամանակը խթանում է՝ ուժեղացնելով տագնապի վիճակը: Այսքան սպասելի հանդիպման ժամանակ բժիշկը վճարում է պարտքը՝ ազատվելով կրկնակի լարվածությունից: Բժիշկը Բորտակին իր մեքենայով տանում է հայրենի գյուղը՝ Ռուլթա, ուր մի քանի օր մնում են հեղեղի պատճառով: Հերոսների լարված իրավիճակի ֆոն են տեղանքի, բնակչության, բարքերի, Կաղիշայի քարայրի ստալագմիտների քարանձավի նկարագրությունը: Հոգեբանական վերլուծությունները չեն դանդաղեցնում վեպի տեմպը, ընդհակառակը՝ ավելի լարվածություն են ստեղծում: Պատահական չէ, որ Քաչայի հերոսների երկրորդ հանդիպումը բնության գրկում է (աշխարհի-մեջ-կեցություն), քանի որ մարդը բնական էակ է, նա բնության պսակն է, բիոլոգիական բարձրագույն տեսակ և աշխարհագրական միջավայրում է ծագել ու զարգացել նրա կյանքը:

Այդ հանդիպումը իր էությամբ «սահմանային իրադրություն» է: Լեռներում խորհրդավոր լռությունը բարձրագույն լարվածություն է ստեղծում: Մարդը, ինչպես և կենդանին, գտնվելով բնության մեջ, վերահսկվում է բնության կողմից, և ինչպես բոլոր կենդանի օրգանիզմները, պայքար է մղում անկենդան և կենդանի գործոնների հետ՝ հանուն կյանքի, հանուն գոյատևման (գոյություն-հանուն-կյանքի): Մարդը ևս իր ամբողջ կյանքի ընթացքում գիտակցաբար և ենթագիտակցաբար պայքարի մեջ է բնության տարերքների, հիվանդության հետ: Էկզիստենցիալիզմի ուսումնասիրման միակ առարկան մարդկային գոյությունն է, գոյության ապրումը: Պատահական չէ, որ Բորտակը տեսնելով նեխած ձիուն, նրբանկատորեն համեմատություն է անում մարդու և ձիու մարմինների միջև, ապա ինքն իր հետ խոսելով՝ եզրակացնում է. «Տարօրինակ բան է այդ սիրտը, քանի խփում է, ամեն ինչ լավ է: Հետո կանգ է առնում, սիրտը կանգնում է, և էլ չենք շնչում: Ոչ ծաղկի բուրմունքն ես շնչում, ոչ առավոտյան սյուքը, ոչ էլ կնոջդ մաշկի հոտը:... Սիրտը կանգնում է, և էլ չենք լսում ո՛չ անտառի աղմուկը, ո՛չ ալիքները, ո՛չ էլ կնոջդ խոսքերը: Սիրտը կանգնում է, հետը կանգնում է ամեն ինչ: Մարմինն այլևս գոյություն չունի: Դառնում է մի փտող բան: Աչքերը և շրթունքները, քիթը և ականջները, թևերն ու ծեռքերը սկսում են հալվել, իրար խառնվել և անհետանալ: Ի՞նչ տարօրինակ բան է այդ սիրտը, այդպես չ՞է բժիշկ»:[5]

Այստեղ մենք հանդիպում ենք Քաչային հատուկ ոճային հնարքին՝ յուրաքանչյուր խոսքի ետևում թաքցնել գաղտնի միտքը:

---

5. Քաչա Վ. «Ակն ընդ ական», «Գիշատիչների խնջույքը», «Սովետ. գրող» հրատ., Երևան 1976, էջ 218-219:

Այդ եզրակացությունը լսելով՝ բժիշկը թակարդն ընկածի պես անհուսորեն «ելք» է փնտրում, և վերջապես, Բորտակը երկար ու մանրամասն բացատրություն է պահանջում իր կնոջ հիվանդության մասին՝ սկզբից մինչև վերջ:

«Սահմանային իրադրությունում» երկու հերոսների միջև սկսվում է «էկզիստենցիալ հաղորդակցություն»: Ընդհանրապես «էկզիստենցիալ հաղորդակցություն»-ը տեղի է ունենում ազատության մեջ, յուրաքանչյուր ոք ազատ է իր մտքերով: Հեղինակն իր հերոսներին ընծեռել է կրկնակի ազատություն՝ հոգու և մտքի: Լինելով կյանքի և մահվան սահմանագծին՝ իրենք իրենց զգում են որպես էկզիստենցիա, իսկ էկզիստենցիան ազատությունն է: Կ.Յասպերսի մոտ էկզիստենցիան և ազատությունը նույնական են, որն էլ դրսևորվում է հաղորդակցության ժամանակ: Յասպերսի, ինչպես և Հայդեգերի մոտ մարդկային կեցությունը «ուրիշների հետ կեցությունն է»: «Մենք պատկերացնում ենք մեր մարդկային կեցության նախնական ֆենոմենը հետևյալ ձևով,- գրում է Կ.Յասպերսը,- մեր էությունն այն է, ինչ մերն է միայն ի շնորհիվ ընդհանուր փոխադարձ գիտակցական ըմբռնողության: Մարդը գոյություն չի կարող ունենալ միայն ինքն իրեն՝ որպես առանձին անհատ»:[6]

Կնոջ հիվանդության պատճառները համոզիչ ու վստահեցնող չեն թվում պարոն Բորտակին: Նրա համոզմամբ մեղավորը բժիշկն է: Նրանց զրույցը հետզհետե ավելի է դաժանանում, նրանք դիմազրկվում են: Մենք ակնհայտ կապ ենք տեսնում այդ հատվածի ու Յասպերսի հետևյալ մտքի հետ. «Հաղորդակցությունը այնպիսի շփում է, որտեղ մարդը հասարակության կողմից պատրաստված դեր չի խաղում» (օրինակ ամուսնու և ընտանիքի հոր, գիտնական քիմիկոսի և պրոֆեսիոնալ գործչի, այս կամ այն քաղաքական կուսակցության անդամի): Այստեղ բացատրվում է թե ինչ է նշանակում «դերասան, ով խաղում է բոլոր այս դերերը»:[7]

Այդպես էլ «Ակն ընդ ական»-ում բժիշկը չի կարող խաղալ, ստել, իսկ ճշմարտությունն ակնհայտ է: Բժիշկը հայտնվում է անելանելի դրության մեջ: Ս.Հայդեգերի համոզմամբ, մարդկային գոյության բնորոշ կատեգորիաներից է «մտահոգությունը», որը պայմանավորված է մեր ներքնաշխարհով: Էկզիստենցիալիստ Քաչայի հերոսը մշտապես մտահոգված է, առավել ևս, եթե դրա համար լուրջ հիմքեր ունի:

«Սահմանային իրադրության» վերաբերյալ ուսմունքում («Փիլիսոփայություն» 1932) համաձայն Կ.Յասպերսի այն մտքին, որ «սահմանային իրադրությունում» հայտնված մարդը ազատվում է իր ամենօրյա հոգսերի բեռից (առկա-կեցություն-աշխարհում): Բժիշկ Էմեն հեռանալով իր առօրյա հոգսերից, հայտնվում է խուճապային իրավիճակում՝ համակված վախով թե Բորտակից,

---

6. Современная буржуазная философия, М., 1978, стр 325

7. Современная буржуазная философия, М., 1978, стр 326

թե բնության տարերքից, կասկածանքով թե իր նկատմամբ, թե Բորտակի, հուսահատությամբ և վերջապես սարսափով:

Ս.Կիերկեգորի հետևորդ Վ.Քաչայի համար վախը բնութագրում է մարդու վերաբերմունքն աշխարհի նկատմամբ: Վախը, ինչպես և մտահոգությունը, անբաժան են մարդու կյանքից: Դա վախ է սեփական անկատարության, վախ ունեցած մեղքերի նկատմամբ: Վախն ու սարսափը ներկայացվում են ոչ միայն հեղինակի մեկնաբանություններում, այլ նաև երկխոսություններում:

Երկու օր անց անանցանելի դժվարին լեռներում մնալով՝ մահացողի ամուսինը՝ չցանկանալով բժշկի հետ կիսել իր ուտելիքը, սովամահ լինելով, իր վրեժը լուծում է յուրովի՝ հոգեպես և ֆիզիկապես տանջելով էռմեին: Սովամահ լինելու վտանգը ռեալ է դարձնում բժշկի դիրքորոշումը՝ «ակն ընդ ական» սկզբունքով պայքարել Բորտակի հետ: Նա այլևս չի զղջում իր ոչ մարդասիրական մոտեցման համար՝ աննշան արևելքցի կնոջ մահը նրա աչքում կորցնում է հումանիստական նշանակությունը: Բժշկի մոտ ծագում է էմոցիաների բացասական կոմպլեքս, սարսափ, մուռեցող մահվան գիտակցում: Նա իր հերթին վրեժով լցվում Բորտակի նկատմամբ: Ցանկացած ոք չի պատկերացնում, թե ինչպիսի վարքագիծ կարող է ցուցաբերել իրադրության մեջ՝ մեկը դիմում է ինքնասպանության, մյուսը՝ դավաճանում հարազատներին, երրորդը՝ համբերատար սպասում: Բժիշկը սողալով մոտենում է Բորտակին, զննում նրա երկճյուղ մկանը, բժշկի հմտությամբ ածելու ծայրը քաշում է ճարպոտ մսի վրայով՝պահանջելով Բորտակից ցույց տալ Տրիպոլիի ճանապարհը: Սակայն Բորտակը շարունակում է հեգնել, ծաղրել, մեղադրել բժշկին: Եվ այստեղ, հեղինակը ևս մեկ անգամ փորձում է ապացուցել, որ մարդկանց փոխհարաբերություններն աղավաղված են, արատավոր, իսկ սեփական արարքը ուրիշի մեկնաբանությամբ դժոխքի է վերածում նրանց ապրելակերպը: Չնայած ստեղծված այս դժոխային իրավիճակին, երկուսն էլ փորձում են փրկվել: Սովը, վախը, ատելությունը նրան գազանացնում են, և նա գիշատիչ է դառնում: Համբերությունը հատած բժիշկը ոտքով այնքան է հարվածում, որ նա այլևս չի շնչում: Իր բարոյական արդարացման համար, բայց հանգամանքների բերումով, բժիշկը դառնում է կրկնակի մեղսագործ: Օտարացման այդ վիճակը դառնում է բարոյական սարսափելի ողբերգության աղբյուր:

Հարկ է նշել, որ Վ.Քաչայի մի քանի ստեղծագործություններում՝ «Արարչի ութերորդ օրը» (1960), «Ակն ընդ ական» (1954), «Մի սևամորթ Լինկոլնի արձանի վրա» (1969), «Ռեքվիեմ պատանդների համար» (1975) «սահմանային իրադրությունում» հայտնված հերոսներն իրավիճակի լուծումը գտնում են բնության տարերքի ներքո, որը գալիս է մեկ անգամ ևս ապացուցելու, որ մարդը բնության կարևորագույն և անբաժանելի մասնիկն է: Մարդկային և հասարակական փոխհարաբերությունները զարգանում են բնության դաժան օրենքներին համընթաց: